«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽՆՁՈՐՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

N_____

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Էկո-դեկոր» ՍՊԸ
ՀՎՀՀ՝ 04253248
ք. Վեդի, Ա.Խաչատրյան 30

«Վայոց Ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով 2025 թվականի օգոստոսի 8-ին հրապարակվել է «**ՀՀՎՁԽՄԴ-ԳՀԱՊՁԲ-2025/13**» ծածկագրով ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել նաև «Էկո-դեկոր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն): Գնահատող հանձնաժողովը 2025 թվականի օգոստոսի 22-ին կայացած նիստում «Էկո-դեկոր» ՍՊԸ-ին ճանաչել է որպես ընտրված մասնակից 1-ին և 2-րդ չափաբաժիններով և սահմանված կարգով մասնակցին ներկայացվել է պայմանագրի նախագիծը, որը վերջինս սահմանված ժամկետում իր կողմից ստորագրված ներկայացրել է: Այնուհետև մասնակիցը հայտնել է, որ մասնկիորեն հրաժարվում է պայմանագրի կատարումից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և/կամ որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, համապատասխանաբար՝

182 000 ՀՀ դրամ (պայմանագրի ապահովման գումար) Հ/Հ՝ «900008000664»

273 000 ՀՀ դրամ (պայմանագրի որակավորման ապահովման գումար) ՀՀ՝ «900008000698»

սահմանված ժամկետներում (սույն ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրերի ընթացքում) վճարելու դեպքում, պատվիրատուի ղեկավարը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգկրելու մասին պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազոր մարմնին:

Պայմանագրի և որակավորման ապահովումները կանխիկ ձևով վճարված լինելու դեպքում՝ անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարություն Ընկերության կողմից ուղղված դիմումի պատճենը՝ ապահովման գումարները նշված հաշվեհամարին փոխանցելու մասին:

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽՆՁՈՐՈՒՏԻ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ Հ.ՕՀԱՆՅԱՆ